2023 Մայիս

Ինչ են Medicare և& Medicaid ծրագրերը?

Medicare-ը առողջության ապահովագրության ծրագիր է՝

- 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անձանց,
- հաշմանդամության որոշ տեսակներ ունեցող մինչև 65 տարեկան անձանց,
- Երիկամային անբավարարությամբ (ԵՔՀ վերջին փուլ) կամ ԿԱՍ-ով (Լուի Գերինգի հիվանդություն) տառապող ցանկացած տարիքի անձանց համար:

Որոնք են Medicare-ի մասերը:

Original Medicare-ը ներառում է Medicare Մաս A-ն (Հիվանդանոցային ապահովագրություն) և Մաս B-ն (Բժշկական ապահովագրություն):

Մաս A-ն օգնում է հատուցել.

- հիվանդանոցներում ստացիոնար բուժման,
- Ստացիոնար խնամքը որակյալ խնամքի հաստատությունում (ոչ խնամակալլութ յան կամ երկարատև խնամքի համար),
- Հոսփիսային խնամքը,
- Տնային պայմաններում մատուցվող առողջապահական ծառայությունները,
- Ստացիոնար խնամքը կրոնական ոչ բժշկական առողջապահական հաստատությո ւնում

Սովորաբար դուք չպետք է վճարեք ամսական ապահովագրավճար Մաս A ծածկույթի համար, եթե դուք կամ ձեր ամուսինը վճարել եք Medicareգծով հարկերը՝ որոշակի ժամանակահատվածում աշխատելիս: Սա երբեմն անվանվում է ապահովագրավճարից ազատ A Մաս: Եթե պայմանունակ չեք առանց ապահովագրավճարի A Մասի համար, հնարավոր է, որ կարողանաք գնել A Մասը:

Մաս B-ն օգնում է հատուցել՝

- Բժիշկների կամ այլ առողջապահական ծառայություններ տրամադրողների կ ողմից բժշկական ծառայությունները,
- արտահիվանդանոցային ծառայությունների,
- տնային պայմաններում մատուցվող առողջապահական ծառայությունների,
- երկարաժամկետ օգտագործման բժշկական սարքավորումների (DME) (ինչպիսիք են անվասայլակները, քայլակները, հիվանդանոցային մահճակալները և այլ սարքավորումները),
- Կանխարգելիչ ծառայություններ (ինչպիսիք են սկրինինգները, պատվաստումները կամ պատվաստանյութերը, և ամենամյա «Ընդհանուր առողջական վիճակի ստուգման» այցելությունները):

Մարդկանց մեծ մասը վճարում է Մաս B-ի ստանդարտ ամսական ապահովագրավճար:

Նշում՝ Medicare-ի հիմնական պլանը փոխհատուցում է բժշկական անհրաժեշտ ծառայությունների և պարագաների արժեքի մեծ մասը, սակայն ոչ ամբողջ ծախսերը: Medicare-ի լրացուցիչ ապահովագրական (Medigap) պլանները վաճառվում են մասնավոր ընկերությունների կողմից և կարող են օգնել վճարել մնացած առողջապահական ծախսերը, ինչպես օրինակ՝ համավճարները, համապահովագրությունը և չհատուցվող գումարները:

Որոնք են Medicare-ի մասերը: (Շարունակություն)

Medicare արտոնյալ պլան (Մաս C)՝

- Medicare Արտոնյալ ծրագիրը մասնավոր ընկերության ծրագիր է, որը հաստատված է Medicare-ի կողմից և առաջարկում է Medicare-ի հիմնական պլանի այլընտրանք ձեր առողջության և դեղերի ծածկույթի համար: Այս «փաթեթային» պլանները ներառում են Մաս A, Մաս B և սովորաբար Մաս D:
- Պլանները կարող են ունենալ սեփական գրպանից կատարվող ավելի փոքր ծախսեր՝ Original Medicare-ի համեմատ:
- Պլանները կարող են առաջարկել լրացուցիչ արտոնություններ, որոնք Original Medicare-ի պլանը չի հատուցում (օրինակ՝ տեսողության, լսողության և ատամների հետ կապված ծառայությունները):

Medicare-ի՝ դեղերի ապահովագրական ծածկույթ (Մաս D)՝

- օգնում է ծածկել դեղատոմսով դուրսգրվող դեղերի հետ կապված ծախսերը, (ներառյալ առաջարկվող շատ պատվաստումներ կամ պատվաստանյութեր):
- Կարող է իրականացվել մասնավոր ապահովագրական ընկերությունների կողմից, որոնք հետևում են Medicare-ի կողմից սահմանված կանոններին:
- Կարող է օգնել կրճատել դեղատոմսով դուրսգրվող դեղերի հետ կապված ծախսերը և օգնել պաշտպանվել ավելի մեծ ծախսերից հետագայում:

Ծանոթագրություն. Եթե Դուք սահմանափակ եկամուտ և ռեսուրսներ ունեք, Դուք հնարավոր է որոշ առողջապահական և դեղերի ծախսերը հոգալու համար օգնություն ստանալու իրավունք ունենաք: Այցելեք Medicare.gov, կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ Ձեր ծախսերը հոգալուն աջակցող ծրագրերի մասին ավելի շատ տեղեկություններ ստանալու համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Ինչ է Medicaid-ը:

Medicaid-ը համատեղ դաշնային և նահանգային ծրագիր է, որն օգնում է վճարել բժշկական ծախսերը, եթե դուք սահմանափակ եկամուտ ունեք և (կամ) համապատասխանում եք այլ պահանջներին: Medicaid-ում ընդգրկված մարդիկ կարող են ստանալ ծածկույթ այն ծառայությունների համար, որոնք Medicare-ը հնարավոր է չծածկի կամ մասնակիորեն ծածկի՝ այնպիսի ծառայություն, ինչպես օրինակ՝ ներտնային խնամքը, անհատական խնամքը և տնային և համայնքային ծառայությունները, ատամնաբուժական, տեսողության և լսողության ծառայություններ:

Ձեր նահանգում Medicaid-ից օգտվելու իրավունք ունենալու համար Դուք պետք է հանդիսանաք տվյալ նահանգի բնակիչ և ԱՄՆ քաղաքացի (կամ համապատասխան իմիգրացիոն կարգավիճակ ունենաք): Տարբեր նահանգներ ունեն Medicaid ծրագրից օգտվելու հնարավորության և դրա համար դիմելու տարբեր կանոններ: Եթե դուք Ձեր նահանգում Medicaid-ից օգտվելու իրավունք ստանաք, դուք ավտոմատ կերպով իրավասու կլինեք նաև Ձեր դեղերի ծախսերը վճարելու լրացուցիչ աջակցության համար:

Շատ նահանգներ ընդլայնել են Medicaid-ը: Սա նշանակում է, որ ավելի շատ մարդիկ կարող են այժմ ապահովագրություն ստանալ, նույնիսկ եթե նախկինում իրավասու չեն եղել: Եթե Դուք կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ ունի առողջապահական ծառայության կարիք, դիմեք Medicaid ծրագրից օգտվելու համար: Ձեր նահանգային Medicaid գործակալությունը կօգնի Ձեզ պարզել, արդյոք դուք իրավասու եք օգտվելու ծրագրից: Այցելեք HealthCare.gov/medicaid-chip/getting-medicaid-chip/ տեղեկանալու Medicaid ծրագրի համար դիմելու մանրամասներին և Ձեր նահանգային Medicaid գործակալության կոնտակտային տվյալները ստանալու համար:

Դուք կարող եք իրավունք ունենալ օգտվելու Medicaid ծրագրից, եթե Դուք ունեք սահմանափակ եկամուտ և՝

- 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անձ եք,
- մինչև 19 տարեկան երեխա եք,
- հղի եք,
- ունեք հաշմանդամություն,
- երեխայի նկատմամբ խնամք իրականացնող ծնող կամ չափահաս անձ եք,
- Ձեր խնամքի տակ երեխաներ չունեցող չափահաս անձ եք (որոշ նահանգներում):

Եթե Դուք Medicaid ունեք, Դուք հնարավոր է կարողանաք օգտվել առողջապահական արտոնություններից, ինչպես օրինակ՝

- բժշկին այցելություններ,
- հիվանդանոցում մնալու հնարավորություն,
- երկարաժամկետ ծառայություններ և աջակցության միջոցներ,
- Կանխարգելիչ ծառայություններ, ներառյալ՝ սրսկումները կամ պատվաստումները, մամոգրաֆիան, կոլոնոսկոպիան և այլ անհրաժեշտ ծառայություններ
- նախածննդյան և ծննդօգնության ծառայություններ,
- հոգեկան առողջության ծառայություններ,
- անհրաժեշտ դեղորայք,
- ակնաբուժական և ատամնաբուժական ծառայություններ (երեխաների համար):

Երկակի իրավասությունը

Որոշ անձինք, ովքեր կարող են օգտվել և՛ Medicare, և՛ Medicaid ծրագրերից, կոչվում են **«երկակի իրավասություն ունեցողներ»**: Եթե Դուք ընդգրկված եք Medicare ծրագրում և օգտվում եք Medicaid-ի լիարժեք ապահովագրական ծածկույթից, առողջապահական ծառայությունների հետ կախված Ձեր ծախսերի մեծ մասը թերևս կարող է հատուցվել:

Դուք կարող եք Medicare-ի ապահովագրական ծածկույթ ձեռք բերել Medicare-ի հիմնական պլանի կամ Medicare-ի արտոնյալ պլանի միջոցով: Եթե Դուք ունեք Medicare և/կամ լիարժեք Medicaid, Մաս D-ն հատուցում է Ձեր՝ դեղատոմսով տրվող դեղերը: Medicaid-ը կարող է հատուցել որոշակի այնպիսի դեղերի և այլ ծառայությունների համար, որոնց համար չի վճարում Medicare-ը:

Երկակի իրավասությունը

- Այցելեք HealthCare.gov/medicaid-chip/getting-medicaid-chip՝ Medicaid-ի մասին մանրամասն տեղեկուկություններ իմանալու համար:
- Այցելեք Medicare.gov կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

Դուք իրավունք ունեք ստանալու Medicare-ի մասին տեղեկատվություն մատչելի ձևաչափով, օրինակ՝ մեծ տառերով տպված, Բռայլի այբուբենով կամ ձայնագրությամբ: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելեք Medicare.gov/about-us/nondiscrimination/accessibility-nondiscrimination.html կայքէջը կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով լրացուցիչ տեղեկությունների համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

This product was produced at U.S. taxpayer expense.

CENTERS FOR MEDICARE & MEDICAID SERVICES

CMS Product No. 11306-AR
(Armenian)